.. Կապված սույն պայմանագրի առարկայի հետ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագրի կնքելը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած 01.01.2013 թվականից քանի որ վարձակալը սկսած 01.01.2013 թվականից մինչև օրս տարածքի վարձակալությամբ տրվող մասը փաստացի օգտագործել է :

4.3. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից և լուծել այն 2 (երկու) ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

4.4. Սույն պայմանագիրը կնքված է համարվում, սույն պայմանագրից ծագող իրավունքը գրանցելու պահից:

5.ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

5.1.Վարձակալած գույքից ՎԱՐՁԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

5.2.ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից առանց ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնության կատարված վարձակալած «ՕԲՅԵԿՏ»-ի մասի անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1.ՎԱՐՁԱՏՈՒԻ և ՎԱՐՁԱԿԱԼԻ պահանջով վարձակալության պայմանագիրը կատարող է վաղաժամկետ լուծվել համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Սույն պայմանգրով ստանձնած պարատվորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5 % -ի (զրո ամբողջ հինգ) տոկոսի չափով:

7.2. Սույն պայամանգրով նախատեսված Օբյեկտի մասի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05%-ի (զրո ամբողջ զրո հինգ) տոկոսի չափով:

7.3 .Սույն պայմանգրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

7.4.վարձակալի կողմից սույն պայմանգրի 3.1. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝վճարման ենթակա,սակայն չվճարված գումարի 0.05%-ի (զրո ամբողջ զրո հինգ) տոկոսի չափով:

7.5. Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6. Տույժերի և /կամ / տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7.7. Սույն պայմանագրի լուծման դեպքեում Վարձակալը պարտավոր է 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին վերադարձնել գույքը , ինչպես նաև մարել Վարձատուի հանդեպ ունեցած պարտքերը:

7.8.Սույն պայմանագրի լուծման դեպքում 7.7. կետում նշված ժամկետում գույքը չվերադարձնելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է վարձավճար և տույժ ժամկետն անց յուրաքանչյուր օրվա համար վարձավճարի 1.0 %-ի (մեկ) տոկոսի չափով

7.9. Գույքը Վարձատուին չվերադարձնելու դեպքում և /կամ/ Վարձատուի հանդեպ պարտավորությունը չկատարելու դեպքում , սույն պայմանագրի լուծման մասին ծանուցման պահից Վարձակալին կամ նրա լիազորված անձանց արգելվում է մուտք գործել վարձակալած տարածք , առանց Վարձատուի համաձայնության ինչպես նաև արգելվում է այդ տարածքից որևէ գույքի դուրս բերումը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

8.1.Սույն պայմանգրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո,և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

9.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

10.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:

10.2.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով կողմերի ցանկությամբ 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.3.Պայմանագրի բովանդակությունը նոտարի կողմից ընթերցվեց կողմերին և պարզաբանվեց գործող օրենսդրության նորմերը, նոտարը կողմերին պարզաբանեց նրանց իրավունքները և պարտականությունները, զգուշացրեց նոտարական գործողության /սույն պայմանգրի կնքման/ հետևանքների մասին:

10.4.Պայմանագրի տեքստը բավարարում է կողմերի պահանջներին: